Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

343.8
Կ-21

Բոլոր բանվորներ բոլոր յերկրների, միացեք!

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ
ԲԱԺՆԻ

ԵՐԵՎԱՆ — 1926 թ.

343.8
Ա-21

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI-1922
ՄՈՍԿՎԱ, ՄԱՍԿՎԱ
Ա. ՍՅԱՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
01 MAR 2010

1003
13655

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնադրությունը վերաբերում է պաշտոնյաներ ընդունելու և արձակելու և նրանց ծառայության կարգը կալանավայրերում և տարածվում է կալանավայրերի վարչական-չարքային կազմի և նրանց կատարող մարմինների անձանց վրա, որոնք հիշատակված են սույն կանոնադրությանը կցված ցուցակում:

Ծանոթություն.—Մնացյալ կատեգորիաների պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները, այլ նրանց ընդունելու և արձակելու և ծառայության կարգը: Բացի սույն հոդվածում մատնանշված և սույն կանոնադրությանը կցված ցուցակում հիշատակված անձերից, վերաբերվում է Աշխատանքի Ռեժիմի և ներքին կարգավորության կանոններով, որ մշակվում է Աշխատանքի Ռեժիմի 55 հոդվածի կարգով:

2. Ներքին ծառայության տարբերությամբ կալանավայրերը դասակարգվում են.

ա) Սույն կանոնադրության և ՀՍԽՀ այլ օրենքներով.

24 FEB 2014

37 047 3

բ) ՆԳԺԿ-ի վորոշումներով և ՆԳԺԿ-ի կալանավայրերի բաժնի հրամաններով, վորոնք հրատարակվում են՝ ի զարգացումն հիշյալ որենքների.

3. Կալանավայրերի աշխատակիցների անձնական և պաշտոնական փորպիսությունը և քաղաքական պատրաստության աստիճանը վորոշվում է վկայությունների հիման վրա, Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի հրատարակած հատուկ հրահանգի համաձայն:

ԳԼՈՒԽ I

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ-ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կանոնադրության 1-ին հոդվածում հիշատակված կալանավայրերի աշխատակիցների վրա, վորպես վարձու աշխատակիցների վրա, տարածվում են Աշխատանքի Որենսգիրքը և ի զարգացումն այդ Որենսգրքի հրատարակված վորոշումները, հետևյալ բացառություններով:

ա) Ներքին ծառայության և կարգապահության նկատմամբ նրանք հավասարեցվում են իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց.

բ) Նրանցից կարող է պահանջվել այնպիսի աշխատանք, վոր կյանքի սպառնացող վտանգի հետ է կապված.

գ) ոպերատիվ աշխատանքի ժամանակը չի կարող սահմանափակված լինել.

դ) Նրանք չեն կարող հրաժարվել գիշերները և սահմանված տոնական ու հանգստի որերն աշխատելուց (Աշխատ. Որենս. 110—112 հոդ.):

Ծանոթություն.—1. Սույն հոդվածի «գ» և «դ» կետերում մատնանշված դեպքերում, Աշխատ. Որենս. 110, 111 և 112 հոդվածների համաձայն, սահմանված չարաթական հանգստի և տոնական որերի փոխարեն, կալանավայրերի աշխատակիցներին Արհմիության տեղական մարմինների համաձայնությամբ պետք է տրվեն հանգստի այլ որեր՝ ոպերատիվ աշխատանքից ազատ ժամանակ:

Ծանոթություն.—2. Յեթե վարչությունը տոն որերի փոխարեն հանգստի այլ որեր չտա, համապատասխան աշխատակիցները դրամական փոխհատուցումն պիտի ստանան Աշխատանքի Որենսգրքի 60 հոդվածի կարգով:

5. Կալանավայրերի վարչական-շարքային կազմի այն անձինք, վորոնք կոչվելու յեն Կարմիր Բանակի մեջ, զորաժողովը հայտարարելիս համարվում են զորաժողովի յենթարկված կալանավայրերի ծառայության մեջ և զինվորական ծառայության կարող են կոչվել հատուկ որենքների հիման վրա:

6. Կալանավայրերը ծառայության մտնող անձիք պարտավորվում են ծառայել մի տարի, վորի համար պատշաճ ստորագրություն են տալիս խնդրագրի հետ միասին: Ծառայության տարին լրանալուց հետո ստորագրությունը կարող է նորոգվել:

7. Կալանավայրերի վարչական-տարքային կարգը ծառայության պարտադիր ժամանակամիջոցը լրանալուց առաջ (հոդ. 6) ծառայությունից ինքնագլուխ հեռանալու համար յենթարկվում է պատասխանատվության Քրեական Որենսգրքի 108 հոդվածի համաձայն:

8. Վարչական-տարքային կազմի անձանց՝ ծառայելու ժամանակ, համապատասխան հիմնարկության հաշվին տրվում է մի ձեռք սահմանված ձևի համազգեստ:

9. Կալանավայրերի աշխատակիցներն իրենց ձեռքին յեղած պետական գենքը, զինամթերքն ու հանդերձանքը կորցնելու կամ գիտմամբ փչացնելու համար դատական պատասխանատվության են յենթարկվում Քրեական Որենսգրքի 108 և 197 հոդվածների համաձայն:

ԳԼՈՒԽ II

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՅԵՎ ՆՇԱՆԱԿԵԼԸ

10. Կալանավայրերի վարչական-տարքային ծառայության մտնող անձինք պետք է համապատասխան լինեն բոլոր հետևյալ պայմաններին.

ա) Պետք է խորհուրդների ընտրական իրավունք ունենան ՀՍԽՀ սահմանադրության համաձայն.

բ) Տարիքը 21-ից պակաս պիտի չլինի.

գ) Առողջության վիճակը համապատասխան պիտի լինի կալանավայրերի ծառայության կանոնների պահանջներին և ծառայության արգելա-

տիթ հիվանդություններ պիտի չունենա, համաձայն հատուկ հրահանգի, որ հրատարակելու յե Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ.

Ծանոթություն.—1. Դատի և քննության տակ գտնվող և հանցագործությունների համար իրավունքներից սահմանափակված (Քր. Որ. Հոդ 40) անձինք կալանավայրերի ծառայության չեն կարող ընդունվել:

Ծանոթություն.—2. Կալանավայրերի վարչական-տարքային ծառայության ընդունելիս նախապատվություն և տրվում զինվորական ծառայություն անցած անձերին՝ մյուս պայմանների հավասարության դեպքում:

11. 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող անձինք ընդունվում են պաշտոնակատարության մինչև միամսյա փորձաշրջանի համար, որի լրանալուց հետո հաստատվում են պաշտոնում կամ մերժում են ստանում:

12. Պաշտոնյաները նշանակվում են հետևյալ կարգով. ա) Համապետական նշանակություն ունեցող կալանավայրերի պետերը, այլ և կալանավայրերի բաժնի անմիջական տեսչության տակ գտնվող կալանավայրերի պետերն ու նրանց ոգնականները նշանակվում են ՆԳԺԿ կալանավայրերի բաժնի հրամանով. բ) բոլոր մնացյալ կալանավայրերի պետերին ու նրանց ոգնականներին նշանակվում են Քաղգամիլիցիայի պետերը, բայց այն կալանավայրերի պետերը, որտեղ չատանե-

լրի համաձայն 250-ից ավելի կալանավոր կա, ան-
պատճառ ներկայացվում են՝ ի հաստատություն
ՆԳԺԿ կալանավայրերի բաժնին. գ) վերակացու-
ներին նշանակում են կալանավայրերի պետերը:

ԳԼՈՒԽ III

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴ

13. Տեղափոխությունն այն է, որ աշխա-
տակցին նույնպիսի կամ համապատասխան պաշ-
տոն են տալիս այլ կալանավայրերում: Տեղափո-
խությունը կատարվում է թե համապատասխան
պետի հայեցողությամբ անկախ տեղափոխվողի
համաձայնությունից և թե կալանավայրի աշխա-
տակցի խնդրիքով:

14. Այն անձինք, որոնց տեղափոխության
մասին կարգադրություն է յեղել, պետք է մեկ-
նեն իրենց ծառայության նոր տեղը՝ հրաման
ստանալուց ու գործերն հանձնելուց հետո անմի-
ջապես:

Ծանոթություն.—Ուրիշ քաղաքների հիմ-
նարկություններ տեղափոխելիս տեղափոխվո-
ղին անհրաժեշտ ժամանակ պիտի տրվի իր
անձնական գործերը կարգի բերելու համար՝
ազատելով նրան իր պարտականություններից:
Հիշյալ ժամանակի տևողությունը վորոշվում
է պետի համաձայնությամբ, բայց 48 ժամից
պակաս պիտի չլինի:

15. Այն աշխատակիցները, որոնք հրաման-
ագրի մեջ նշանակված ժամանակին ստանց հար-
գելի պատճառների իրենց ծառայության նոր տե-

ղը չեն ժամանում, յենթարկվում են պատասխա-
նատվության կարգապահական կամ դատական
կարգով (ՌԲ. ՈՐ. հոդ 108):

16. Կալանավայրերի աշխատակիցները արձա-
կուրդի իրավունք են վայելում Աշխատանքի Ո-
րենսգրքի 114 և 115 հոդվածների համաձայն և
116 120 հոդվածների համեմատ, այլ և վայելում
են Աշխատանքի Որենսգրքի 91 և 92 հոդ. մատ-
նանշած յերաշխիքները:

Ծանոթություն.—Պատշաճ կարգով վկայ-
ված բացառիկ դեպքերում (մերձավորների մա-
հը կամ վտանգավոր հիվանդությունը, տա-
բերային աղետներ) արձակուրդ կարող է տրվել
հերթից դուրս:

17. Հերթից դուրս տրվող արձակուրդի տևո-
ղությունը մի ամսից ավելի չպետք է լինի:

18. Հերթից դուրս արձակուրդ ստացողները
հերթական արձակուրդի իրավունքից չեն զրկ-
վում:

19. Հերթական և հերթից դուրս արձակուրդ
ստացողներն իրավունք ունեն ստանալու իրենց
պաշտոնին հատկացրած բոլոր մթերքները:

Ծանոթություն.—Բացակայող աշխատա-
կիցների պարտականությունները ժամանակա-
վորապես կատարող անձինք վայելում են այդ
պաշտոններին վերաբերյալ բոլոր իրավունք-
ները և կատարում են բոլոր պարտականու-
թյունները, պահելով իրենց մշտական պաշ-
տոնները և նրանց համապատասխան աշխատա-
վարձը:

20. Եթէ աշխատակիցն յոր արձակուրդիցն ոգևվում է իր ծառայության մշտական վայրից դուրս անցում, այս դեպքում նրա արձակուրդին վերատաճվում ժամանակ է ավելացվում ծառայության վայրից իր ընտրած բնակության տեղը գնալ-գալու համար ՆԳԺԿ կայանավայրերի բաժնի հրամաններում հայտարարվող հատուկ ցուցակների համաձայն:

21. Կայանավայրերի աշխատակիցներին արձակուրդ տալու իրավունք ունեն համապատասխան կայանավայրերի պետերը՝ իսկ կայանավայրերի պետերին՝ ՆԳԺԿ կայանավայրերի բաժնի պետը:

22. Կայանավայրերի աշխատակիցների վերաբերմամբ գործածով հայտարարելու դեպքում բոլոր հերթական և հերթից դուրս արձակուրդ գալիքները պարտավոր են անհապաղ գալ իրենց ծառայության վայրը:

ԳԼՈՒԽ IV

ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼԸ

23. Պաշտոնից հեռացնել է կոչվում պաշտոնի վերաբերյալ պարտականություններ կատարելը ժամանակավորապես արգելելը:

24. Պաշտոնից հեռացնելը տեղի չի ունենում կամ քննիչ մարմինների ցուցմունքով, Քր. Դատ. Որ. 142 հոդ. համաձայն, կամ այն պետի կարգադրությամբ, վորի իշխանությամբ հեռացվածը պաշտոնի է նշանակված, նույնպես և այդ բանի համար լիազորված այլ պաշտոնյաների կարգադրությամբ:

25. Բացառիկ, անհետաձգելի դեպքերում կայանավայրերի պետերն իրենց իշխանությամբ հեռացնում են իրենց ստորադրյալին, նույնիսկ եթե նրանց բարձրագույն ատյանն է նշանակել, անհապաղ հայտնելով այդ ատյանին հեռացնելու պատճառները:

26. Պաշտոնից հեռացնելու ամեն մի դեպքում, բացի քննիչ մարմինների պահանջմամբ պաշտոնից հեռացնելու դեպքերում (Քր. Դատ. Որ. հոդ. 142), այն պետը, վորի կարգադրությամբ պաշտոնից հեռացրածը պաշտոնի է յեղել նշանակված, անհապաղ կարգադրություն է անում հետաքննություն կատարելու մասին՝ Քր. Դատ. Որ. 97 հոդ. 3 կետի կարգով:

27. Եթե հետաքննությունը պարզեց պաշտոնից հեռացնելու հիմնավոր լինելը, հեռացրածը կարող է արձակվել սույն կանոնադրության 30—34 հոդվածների պահանջները կատարելով: Հակառակ դեպքում նա վերադառնում է իր պաշտոնին:

28. Եթե պաշտոնից հեռացնելը տեղի չի ունեցել նախ քան քննիչ իշխանության գործը քննելը և եթե վերջինի վորոշումն է, թե պետք չեր հեռացնել, հեռացրածին պետք է իր պաշտոնը վերադարձնել:

29. Իր ստորադրյալին ատյանց հարգելի պատճառների պաշտոնից հեռացնող պետը յենթարկվում է պատասխանատվության կարգապահական

կամ դատական կարգով (Քբ. Որ. 105 հոդ. և 106 հոդ. 1 մ.):

30. Ծառայությունից արձակելը տեղի յե ունենում.

ա) աշխատակցի սեփական ցանկությամբ և

բ) անկախ նրա ցանկությունից:

31. Կալանավայրերի այն աշխատակիցները, վորոնք ծառայության պարտադիր ժամանակամիջոցը չեն ծառայել կարող են արձակվել իրենց միջնորդության հիման վրա այն պետի կարգադրությամբ, վոր նրանց նշանակել է, հիվանդության դեպքերում՝ ընտանեկան հանգամանքների և այլ հարգելի պատճառներով:

Ծանոթություն.—Եթե կալանավայրերի աշխատակիցը վկայական ներկայացնե բժշկական վերահսկողության հանձնաժողովից այնպիսի հիվանդության մասին, վոր արգելք և հանդիսանում ծառայությունը շարունակելու կալանավայրերում, վարչությունն իրավունք չունի մերժելու նրա միջնորդությունը իրեն արձակելու մասին:

32. Կալանավայրերի այն աշխատակիցները, վորոնք իրենց տված ստորագրությամբ պայմանաժամը լրանալուց հետո ցանկանում են դուրս գալ ծառայությունից, պարտավոր են նախորոք հայտնել այդ մասին, վոչ ուշ քան պարտադիր ժամանակը լրանալուց մի ամիս առաջ:

Եթե ստորագրության պայմանաժամը լրանալու պահուն փոխանորդ չլինի, արձակվողին կարելի յե պահել կալանավայրի ծառայության

մեջ, բայց վոչ ավելի քան 2 շաբաթ ժամանակը լրանալուց հետո:

Ծանոթություն.—Եթե արձակվողը ժամանակին չի հայտնել վոր ինքը ցանկանում է կալանավայրի ծառայությունից դուրս գալ, նրան կարելի յե պահել մինչև փոխանորդ գրանելը, բայց մի ամսից վոչ ավելի:

33. Կալանավայրերի աշխատակիցներին ծառայությունից իրենց ցանկությունից անկախ արձակելը տեղի յե ունենում՝ համապատասխան արհմիության մարմնին (արհլիազորին) տեղեկություն տալով և Աշխատանքի Որենսգրքի 47 հոդվածի 2-րդ և 3-րդ ծանոթությունների պայմանները կատարելով.

ա) Աշխատանքի Որենսգրքի 47 հոդ. նախատեսված դեպքերում.

բ) վկայության կարգով, սույն կանոնադրության 3-րդ հոդ. նախատեսված հրահանգի համաձայն.

գ) ծառայելու անընդունակության պատճառով, բժշկական հանձնաժողովի վորոշման համաձայն:

դ) կարգապահության կարգով, սույն կանոնադրության 5-րդ գլխի համաձայն:

Ծանոթություն.—Կալանավայրերի աշխատակիցները՝ Աշխատանքի Որենսգրքի 47 հոդ. «գ» և «դ» կետերով, այլ սույն հոդվածի «բ», «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում արձակվելիս, արձակվում են համապատաս-

խան պետերի կարգադրություններով, վորի մասին հետո տեղեկություն և տրվում արհեստակցական կազմակերպություններին։ Մնացյալ բոլոր դեպքերում նրանք արձակվում են Աշխատանքի Որենսդրքի 161 հոդ. «գ» կետի համաձայն։

34. Առանց տրնական հիմքերի իր ստորադրյալին արձակող պետը յենթարկվում և պատասխանատվության կարգապահական կամ դատական կարգով (Քր. Որ. 105 հոդ. և 106 հոդ. 1 մ.)։

ԳԼՈՒԽ V

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ

35. Կալանավայրերի վարչական – շարքային կազմը՝ որենքով և կանոնադրություններով սահմանված պարտականություններն ու վարքի կանոնները խախտելու, այլև ծառայության անբարեխղճությամբ, անուշադրությամբ և անփութությամբ վերաբերվելու համար, վոր սակայն պատժելի քրեական արարքի նշաններ չի պարունակում, յենթարկվում և հետևյալ կարգապահական պատիժների.

ա) հանդիմանության, հայտարարելով հրամանի մեջ կամ առանց հայտարարելու.

բ) հանդիմանության, նախազգուշացնելով արձակման մասին.

գ) կալանք մինչև 7 որ.

դ) արձակումն ծառայությունից, ՀՍԽՀ ԿԳԿ-ի և ԺԿՍ-ի 1926 թ. հունվարի 15-ի «Պետական և պետականների հավասարեցրած հիմնարկությունների ու ձեռնարկությունների պաշտոնյաներին կարգապահական պատասխանատվության յենթարկելու մասին» վորոշման հոդ. 9 համաձայն։

36. Իրենց ստորադրյալներին կարգապահական պատիժներ տալու իրավունք ունին։

1. ՆԳԺԿ-ի կալանավայրերի բաժնի պետն ու նրա ոգնականը.

2. Կալանավայրի պետն ու նրա ոգնականը։

37. Հիշյալ անձինքն իրավունք ունին.

1. Կալանավայրի պետի ոգնականը՝ հանդիմանություն անելու, հայտարարելով հրամանի մեջ կամ առանց հայտարարելու.

2. Կալանավայրի պետը՝ հանդիմանություն հայտնելու, հայտարարելով հրամանի մեջ կամ առանց հայտարարելու, կալանավորելու մինչև յերեք որ և ծառայությունից արձակելու, կատարելով սույն կանոնադրության 36 հոդ. «գ» կետը։

3. ՆԳԺԿ-ի կալանավայրերի բաժնի պետը և նրա ոգնականը՝ կարգապահական պատիժների նշանակելու լրիվ չափով։

38. Յեթե պետը իր այս կամ այն ստորադրյալին պատիժ տալու համար իրեն վերապահված իշխանությունը բավական չի համարում, դիմումն և անում ստորադրության կարգով վերադաս պետի իշխանությամբ պատիժ նշանակելու մասին։

39. Կարգապահական պատիժներ նշանակելու և գործադրելու կարգը, այլ և նրանց դեմ դանգատ

տալու կարգը վորոշվում է ներքին կարգավորության կանոններով, վորոնք հրատարակվում են Աշխատանքի Որենսգրքի 55 հոդ. կարգով:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահի Տեղակալ՝ Ա. ՄՈՒԱՎՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

1926 թ. փետրվարի 23.
Յերևան

27. Յուցակ անձանց, վորոնց վրա տարածվում է կալանավայրերի ծառայության կանոնադրությունը

1. ՆԳԺԿ-ի կալանավայրերի Բաժնի Պետ.
2. ՆԳԺԿ-ի կալանավայրերի Բաժնի պետի ոգնական.
3. Գավառական կալանավայրերի պետերն ու նրանց ոգնականները.
4. Ավագ վերակացու.
5. Բաժանմունքի վերակացու.
6. Կրտսեր վերակացու:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահի Տեղակալ՝ Ա. ՄՈՒԱՎՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Հ. ՏԱՏՅԱՆ

1926 թ. փետրվարի 23.
Յերևան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* C.C.P.A. Публичная Библиотека *
7/XI-1922
Инвент. Номер
Ա. ՄԱՍԱՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
Գրաք. 759ր. Պատվեր 4361 Տիրաժ 200

ՀՀ Ազգային գրադարան
NL0219320

37 073